ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/45

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր՝ «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Հարությունյանի, Գ. Մկրտչյանի,
Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարության ներկայացուցիչ՝ Տ. Աբրահամյանի,
Երրորդ անձ՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 25.06.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Արգելել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով պայմանագրի կնքումը «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի և «Մոսէսքո» ՍՊԸ-ի հետ,

2. Անվավեր ճանաչել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի 13.06.2019թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումը թիվ 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով,

3. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին կայացնել «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ին ընթացակարգի թիվ 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշում,

4. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին կայացնել «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի հետ ընթացակարգի թիվ 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 25.06.2019թ. և 26.06.2019թ. կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, 03.07.2019թ. և 18.07.2019թ. նշանակվել են նիստեր:

Բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 1-ին տեղ ճանաչված «Մոսէսքո» ՍՊԸ-ն ներգրավվել է որպես երրորդ անձ:

Բողոքի քննությունն ավարտվել է 18.07.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.07.2019թ.:

2. <u>«Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է հաղթող և 04.06.2019թ. և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը 04.06.2019թ. ուղարկել է ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային փոստին:

Բացի նամակի ուղարկումը 05.06.2019թ. և 06.06.2019թ. «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն բազմաթիվ անգամ (7-8 անգամ) փորձել է կապ հաստատել ՀՀ ՊՆ ներքին հեռախոսահամարով, սակայն չի հաջողվել խոսել պատասխանատու անձանց հետ:

Հնարավորություն է ստեղծվել կապ հաստատել միայն 07.06.2019թ., երբ պատասխանատու անձը պարզաբանել է, որ իր հետ կապ հաստատելու հետ կապված խոչընդոտը եղել է իր «խառը լինելը» և պարզաբանել է, որ «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից ուղարկված փաստաթղթերը չի ստացվել:

Մենք պատասխանատու չենք ՊՆ-ի կողմից մեզ տրամադրված էլեկտրոնային փոստի խափանման համար, մենք պատասխանատու ենք միայն պատշաճ ուղարկելու համար, ինչն էլ կատարել ենք:

Մինչդեռ «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն բոլոր փաստաթղթերը կազմել է ճիշտ ժամանակին, ինչում կարող եք համոզվել նույնիսկ ստուգելով էլեկտրոնային ստորագրությունների ամսաթիվը, իսկ ժամանակին ուղարկված լինելը հավաստվում է էլեկտրոնային փոստից կատարված արտատպումով, որի համաձայն փաստաթղթերը ներկայացվել են 04.06.2019թ. ժամը 15:42-ին այսինքն սահմանված վերջնաժամկետից 2 օր առաջ:

Հանձնաժողովը սուբյեկտիվ կերպով մերժել է «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի գրավոր առարկությունը հիմնվելով բացառապես ՀՀ ՋՈԻ կապի վարչության 14.06.2019թ. Է/Փ ելք 1242/ԿՎ գրության վրա, որի համաձայն 2019թ. հունիսի 4-ից հունիսի 6-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ mail.mil.am սերվերում bitxirn.g@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից t.abrahamyan@mil.am էյեկտրոնային փոստի հասցեին ուղղված նամակ չի ուղարկվել, այլ ուղարկվել է 07.06.2019թ.:

Մինչդեռ ՀՀ ՊՆ կողմից տրված տեղեկատվությունը սուբյեկտիվ է և չի համապատասխանում իրականությանը, քանի որ ՀՀ ՋՈԻ կապի վարչությունը չի կարող որոշել, թե երբ է «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն ուղարկել նամակը, այլ կարող է միայն ասել, թե ինքը երբ է ստացել այն. Իսկ ուշ ստացված լինելը կամ չստացված լինելը կարող են կապված լինել հենց ՀՀ ՋՈԻ կապի վարչության մոտ առկա տեխնիկական խնդիրներով:

Տեխնիկական խնդիրը մեզ հետ կապված լինելը հնարակոր է ընդունեինք, եթե օգտագործած լինեինք ինչ-որ անհայտ փոստային ծառայություն, սակայն մենք օգտվում ենք ՀՀ-ում, եթե ոչ ամենատարածված ապա առնվազն տարածվածության և կիրառման ծավալներով երկու ամենահայտնի կապի օպերատորներից մեկից mail.ru-ից, որից պաշտոնապես օգտվում է նաև ՀՀ ողջ դատական հարկադիր կատարման ծառայության համակարգը:

Այսպիսով այսքան մեծ վստահություն վայելող կապի ծառայության էջից կատարված արտատպումն ավելին քան բավարար էր «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի փաստարկներին ավելի մեծ ուշադրություն դարձնելու և ապացույցների համակողմանիությամբ դրանք ճիշտ համարելու համար: Փաստարկը հիմնավորող լրացուցիչ ապացույց է նաև ստորագրությունները մեր վկայակոչած ժամկետում դրված լինելը, այսինքն, «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի համար որևէ լրացուցիչ ժամանակ անհրաժեշտ չէր ունեցած փաստաթղթերը լրամշակելու համար և փաթեթը պատրաստ է եղել և ուղարկվել է 04.06.2019թ.:

Եվս մեկ փաստարկ վկայում է ՀՀ ՊՆ-ում սուբյեկտիվ վերաբերմունքի և մեր իրավունքների խախտման մասին, դա խնդրի բացակայության մեջ հավաստիանալու համար կատարված բազմաթիվ զանգերն էին, որոնք կատարվել էին օրենքով սահմանված ժամկետում (հունիսի 4-ից 6-ը), այսինքն քանի դեռ կար ժամկետ ներքին կապուղով որևէ մեկը մեր զանգերը չուղղորդեց պատասխանատու անձին, ով էլ մեզ կտեղեկացներ խնդրի մասին, իսկ ժամկետի ավարտի հաջորդ օրը արդեն պատասխանում են զանգերին՝ պոստ ֆակտում հայտնելով խնդրի մասին:

Վերջին նկարագրածս հանգամանքը սուբյեկտիվիզմի և «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի նկատմամբ դրսևորած խտրական և անբարեհաճ վերաբերմունքի դրսևորում է, որի բուն պատճառները մեզ հայտնի չեն, սակայն հարկ է նկատել, որ հենց նման արհեստական սուբյեկտիվիզմի բացառման համար էլ գոյություն ունի նորմատիվ իրավական կարգավորում ՀՀ Կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշմամբ (այսուհետ Կարգ):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին

առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Վերոշարադրյալ կետի պահանջը կատարվել է պատշաճ, քանի որ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էյեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ին առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Վերոշարադրյալ կետի պահանջն առհասարակ չի կատարվել, քանի որ անհամապատասխանություն արձանագրվելուց հետո հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով չի ծանուցել առաջին տեղն գբաղեցրած մասնակից «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ին առաջարկելով վերջինիս երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, ավելին հենց իրենք են իրենց 13.06.2019թ. արձանագրությունում նշեր, որ 07.06.2019թ. ստացել են փաստաթղթերը, այսինքն նույնիսկ կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ 07.06.2019թ.. անհամապատասխանությունը հայտնաբերելու դեպքում, քարտողարը պարտավոր էր առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, այսինքն՝ հունիսի 08-ը և 09-ը ոչ աշխատանքային լինելու պայմաններում՝ ընդհուպ մինչև 12.06.2019թ. «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն ունեցել է անհամապատասխանությունը շտկելու ժամկետ, այնինչ հենց հանձնաժողովն է փաստել, որ ՀՀ ՊՆ mail.mil.am սերվերում bitxim.g@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին նամակն ուղարկվել է 07.06.2019թ.:

Տվյալ դեպքում քարտուղարի և հանձնաժողովի կողմից թույլ է տրվել կրկնակի խախտում, քանի որ վերջիններս ոչ միայն իրենք ժամանակին չեն տեղեկացրել

անհամապատասխանության մասին և առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, այլ նաև պատասխանատու անձնական զբաղվածության պատճառով չեն միացրել բազմաթիվ հեռախոսազանգերը, որոնց միջոցով բարեխիղճ տնտեսվարողը փորձել է համոզվել խնդրի բացակայության մեջ:

Այսպիսով, ունենք երկու պնդում, որոնք հավաստվում են համապատասխան ապացույցների և համապատասխանաբար հակառակը հերքող ապացույցների բացակայությամբ, այն է՝

• «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացրել է ժամանակին, ինչը հավաստվում է mail.ru էլեկտրոնային փոստի օպերատորի էջից կատարված արտատպումով և փաստաթղթերի վրա առկա էլեկտրոնային ստորագրությունների ամսաթվով:

• Եթե նույնիսկ մեզ անհասկանալի պատճառով հերքվի ժամանակին փաստաթղթերը ներկայացված լինելու հանգամանքը, ապա միևնույն է բացակայում է երեք աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ գրավոր առաջարկը, ուստի առկա է հանձնաժողովի քարտուղարի կողմից թույլ տրված խախտում, որը հաշվի չի առել հանձնաժողովը:»:

Ելնելով վերոգրյալներից, Բողոքներ քննող անձին Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Արգելել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով պայմանագրի կնքումը «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի և «Մոսէսքո» ՍՊԸ-ի հետ,

2. Անվավեր ճանաչել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի 13.06.2019թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումը թիվ 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով,

3. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին կայացնել «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ին ընթացակարգի թիվ 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշում,

4. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին կայացնել «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի հետ ընթացակարգի թիվ 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին որոշում:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 26.06.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ հնարավորություն տալով «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից 25.06.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 02.07.2019թ. թիվ ՊՆ/02/1073-2019 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով ընթացակարգի /այսուհետ՝ Ընթացակարգ/ շրջանակներում 31.05.2019թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընթացակարգի 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով «Կենցաղային Քիմիայի Գործարան» ՍՊԸ-ն /այսուհետ՝ Ընկերություն/ ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 03.06.2019թ. Ընկերությանը ծանուցվել է առ այն, որ վերջինս պարտավոր է ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային փոստին ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերության կողմից 2019թ. հունիսի 7-ին Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվել է թվով երեք էլեկտրոնային նամակ, որոնց վերաբերյալ համակարգչից կատարված արտապումները կցվում են: Առաջին նամակում Ընթացակարգի ծածկագիրը սխալ նշվելուց հետո նույն օրը, այսինքն հունիսի 7-ին, որպեսների տարբերությամբ ուղարկվել է 2-րդ նամակը՝ ճշգրտված ծածկագրով:

Հարկ ենք համարում նշել, որ Ընկերությունը հրավերով սահմանված կարգով պարտավոր էր որակավորման փաստաթղթերն ուղարկել ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ս.թ. հունիսի 6-ը ներառյալ:

Քանի որ Ընկերության կողմից վիճարկվել է այն փաստը, որ հանձնաժողովի քարտուղարի t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին անհրաժեշտ փաստաթղթերն ուղարկվել է իբր սահմանված ժամկետում՝ 2019թ. հունիսի 4-ին, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց դիմել ՀՀ ՀՈՒ կապի և ԱԿՀ վարչություն՝ տրամադրել տեղեկատվություն, արդյոք 2019 թվականի հունիսի 4-ից հունիսի 6-ը ընկած

ժամանակահատվածում ՀՀ ՊՆ mail.mil.am սերվերում t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին bitxim.g@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված նամակ գրանցվել է, թե՝ ոչ:

ՀՀ ՋՈՒ կապի վարչության 14.06.2019թ է/փ ելք 1242/ԿՎ գրությամբ ստացված պատասխանի (կցվում է) համաձայն 2019 թվականի հունիսի 4-ից հունիսի 6-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ mail.mil.am սերվերում bitxim.g@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված նամակ չի գրանցվել: Հիմք ընդունելով «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից որակավորման փաստաթղթերը ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում չներկայացնելու հանգամանքը, ինչպես նաև ՀՀ ՋՈՒ կապի վարչության վերը նշված գրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել Ընկերության հայտը:

Հարկ եմ համարում նշել, որ ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչությունը հանդիսանում է ՀՀ ՊՆ համակարգում mail.mil.am էլեկտրոնային փոստի սերվերին տիրապետող միակ ստորաբաժանումը և վերջինիս կողմից տրված ցանկացած եզրակացություն՝ կապված էլեկտրոնային փոստի, տեխնիկական խափանումների կամ այլնի վերաբերյալ, համարվում է պաշտոնական և հավաստի, այնինչ Ընկերության կողմից Բողոքներ քննող անձին ներկայացված արտատպումը ոչ պաշտոնական փաստաթուղթ է: Ավելին, համակարգչի վերաբերյալ միջին գիտելիք ունեցող ցանկացած անձ կարող է mail.ru էլեկտրոնային փոստից հետին ամսաթվով ուղարկել նամակ՝ ընդամենը փոխելով տվյալ համակարգչի ժամանակային տվյալները՝ ժամային գոտին /time zona/, ամսաթիվը, որի արդյունքում նամակը ստացվում է ռեալ ժամանակում, իսկ նամակն ուղարկողի մոտ ուղարկված է ցույց տալիս հետին ամսաթվով (անհրաժեշտության դեպքում կարող ենք ցուցադրել): Հետևաբար, Ընկերության կողմից ներկայացված արտատպումը չի կարող ընդունվել որպես հավաստի և վստահելի: Դրանում համոզվելու համար անհրաժեշտ է դիմել միայն mail.ru սերվերին, որի կողմից ստացված պատասխանը միայն կարող է ընդունվել որպես հիմք:

Ինչ վերաբերվում է Ընկերության այն տեսակետին, որ վերջինս զանգահարել է Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարին և պատասխան չի ստացել, չէր կարող խոչընդոտել Ընեկորությանը՝ հրավերով սահմանված ժամկետում ներկայացնելու պահանջվող փաստաթղթերը, քանի որ Ընթացակարգի հրավերի 7.14-րդ կետով սահմված է՝ /Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը սույն հրավերի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը հիշյալ ենթակետով սահմանված ժամկետում

ուղարկում է հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ սույն հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով/: Այսինքն, եթե Ընկերությունը քարտուղարից նման նամակ չէր ստացել, կարող էր կրկին ուղարկել մինչև կստանար պատասխան նամակ՝ իր տրամադրության տակ ունենալով երեք աշխատանքային օր: Ի դեպ, զանգերի մասով՝ չենք հերքում, որ Ընկերության կողմից դրանք եղել են, բայց զանգերը եղել են ոչ թե հունիսի 4-ին, այլ հունիսի 7-ին: Միգուցե փաստաթղթերի ուշացումով ուղարկելու հանգամանքը գիտակցելն /հասկանալը/ է այդ զանգերի բուն պատճառը, որի բուն նպատակը եղել են ուշացված նամակի հետագա «ճակատագրի» վերաբերյալ գնահատող հանձնաժողովի տրամադրվածության շոշափումն ու հետագա «մանևրելու» ուղիներ կիրառելու փնտրտուքները:

Կարծում ենք, որ այդ փնտրտուքների արդյունքն էլ հանդիսացել է Ընկերության կողմից փաստաթղթերի ուղարկումը այլ՝ kkarapetyan2582@mail.ru *փոստի հասցեատերին՝ նախապես ընտրելով արդարանալու /ապացուցելու/ կամ պաշտպանվելու ռազմավարություն, քանի որ ոչ մի անհրաժեշտություն և տրամաբանություն չկա այլ հասցեատիրոջ ուղարկել հիշյալ փաստաթղթերը:*

Ինչ վերաբերվում է ՀՀ ՊՆ-ի կողմից Ընկերության իրավունքները խախտելուն և վերջինիս նկատմամբ դրսևորած սուբյեկտիվ, խտրական ու անբարեհաճ վերաբերմունք դրսևորելու Ընկերության գնահատականին, ապա դա պարզապես անհեթեթություն է, չի համապատասխանում ՀՀ ՊՆ գնումների համակարգի աշխատելաոճին, դա իրենց սուբյեկտիվ կարծիքն է և, ըստ էության, զրպարտություն ու անհիմն մեղադրանք է իրենից ներկայացնում:

Եվս մեկ հանգամանք, որը վկայում է փաստաթղթերը ուշ ներկայացնելու փաստը՝ Ընկերությունը, հղում կատարելով ՀՀ կառավարության 04,05,2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 47-րդ կետին, գտնում է, որ հունիսի 7-ին, այսինքն ուշացումով ուղարկված լինելը, համարվում է անհամապատասխանություն (այսինքն, ընդունում է ուշացումով ուղարկված լինելու փաստը) և ենթակա է շտկում պահանջելու: Այս դրույթը ներառվել է Կարգում ՀՀ կառավարության 2019թ. N 516-Ն որոշմամբ, որն ուժի մեջ է մտել ս.թ. հունիսի 1-ից և չի տարածվում տվյալ Ընթացակարգի վրա, քանի որ ընթացակարգի հրավերի տեքստը գնահատող

հանձնաժողովի կողմից հաստատվել է 2019 թվականի մայիսի 6-ին և մասնակիցների հայտերի գնահատումն իրականացվել է հաստատված հրավերի պահանջների համաձայն:»:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա չէ բավարարման:

4. <u>Երրորդ անձ՝ «Մոսէքսը» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 1-ին տեղ ճանաչված «Մոսէքսը» ՍՊԸ-ն ներգրավվել է որպես երրորդ անձ (այսուհետ՝ Երրորդ անձ):

Ներկայացված դիքորոշմամբ Երրորդ անձը հայտնել է հետևյալը.

««Կենցաղային Քիմիայի Գործարան» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև գնահատող հանձնաժողովը որոշել է՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնելու ծածկագրով աճուրդի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը՝ սահմանելով վերջնաժամկետ մինչև 06.06.2019թ. ներառյալ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Կենցաղային Քիմիայի Գործարան» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ եթնակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված

փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 03.06.2019թ. /երկուշաբթի օր/ «Կենցաղային Քիմիայի Գործարան» ՍՊԸ-ն ծանուցվել է՝ հրավերով սահմանված ժամկետում և կարգով Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային փոստին ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը /Ընկերությունը հրավերով սահմանված կարգով պարտավոր էր որակավորման փաստաթղթերն ուղարկել ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 06.06.2019թ. /հինգշաբթի օր//:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Կենցաղային Քիմիայի Գործարան» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում չեն ներկայացրել, սակայն Ընկերության կողմից վիճարկվել է այն փաստը, որ հանձնաժողովի քարտուղարի t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին անհրաժեշտ փաստաթղթերն ուղարկվել է իբր սահմանված ժամկետում՝ 2019թ. հունիսի 4-ին: Հաշվի առնելով Ընկերության կողմից ներկայացված գրությունը և ներկայացված արտատպումը՝ ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և դիմել ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչություն, որպեսզի վերջինս տրամադրի տեղեկատվություն, արդյոք 2019 թվականի հունիսի 4-ից հունիսի 6-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ mail.mil.am սերվերում t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին bitxim.g@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված նամակ գրանցվել է, թե՝ ոչ: ՀՀ ՋՈՒ կապի վարչության 14.06.2019թ էլ/փ ելք 1242/ԿՎ գրությամբ ստացված պատասխանի համաձայն 2019 թվականի հունիսի 4-ից հունիսի 6-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ mail.mil.am սերվերում bitxim.g@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված նամակ չի գրանցվել: Հիմք ընդունելով ՀՀ ՋՈՒ կապի վարչության վերը նշված գրությունը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինս որակավորման փաստաթղթերը ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում քննվել են բազմաթիվ նմանատիպ գործեր, որոնց դեպքում բողոքներ քննող անձը կատարել է մանրակրկիտ ուսումնասիրություն՝ ստուգելով թե որ էլ. հասցեից է ուղարկվել նամակը, թե արդյոք Ընթացակարգի հրավերով սահմանված էլ. փոստին է ուղարկվել, թե ոչ, արդյոք նշված է թե որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ուղարկվել փաստաթղթերը թե ոչ, նիստի ընթացքում կամ նիստի ավարտից հետո պահանջել Ընկերության ներկայացուցչին մուտք գործել Ընկերության էլ.փոստ, որպեսզի Ընկերության ներկայացիչը ներկայացնի սահմանված ժամկետում Ընթացակարգի քարտուղարի էլ. հասցեին ուղարկված նամակը և ավելին անհրաժեշտության դեպքում ներգրավել փորձագետ՝ իսկությունը պարզելու համար:

Այնինչ «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից որպես ապացույց մեջբերվում է արտատպում և որոշակի փաստաթղթեր, որում առկա են էլեկտրոնային ստորագրություն, որը մեր կարծիքով չի կարող ընդունվել որպես ապացույց, քանի որ արտատպումը կարող է պատրաստել համակարգչի միջոցով աշխատող յուրաքանչյուր անձ, իսկ էլեկտրոնային ստորագրություն դրված փաստաթղթերի մասով՝ հայտնում ենք, որ առկա չէ որևէ բարդություն հունիսի 4 ստորագրել փաստաթղթերը, այնուհետև մոռանալ ուղարկել փաստաթղթերը և/կամ/ միտումնավոր չուղարկել:

Այս պարագայում, որպես փաստական հանգամանքներ ՀՀ ՊՆ-ի մոտ առկա է ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության համապատասխան գրությունը, որը փաստում է, որ «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում 03.06.2019թ.-06.06.2019թ. չի ներկայացրել որևէ փաստաթուղթ՝ Ընթացակարգի քարտուղարին և մյուս կողմից «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով՝ անհասկանալի արտատպում և էլեկտրոնային ստորագրությամբ հաստատած փաստաթուղթ, որոնք ուղղակի չեն կարող դրվել մեկ հարթության վրա՝ ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության գրության հետ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի ուշադրությունն ենք հրավիրում նաև մեկ այլ կարևոր հանգամանքի վրա, այն է՝ «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հղում է կատարել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետին, ըստ որի Ընկերությունը գտնում է, որ հունիսի 7-ին փաստաթղթերը ուղարկված լինելը, համարվում է անհամապատասխանություն (այսինքն,

«Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ն ընդունում է ուշացումով ուղարկված լինելու փաստը) և ենթակա է շտկում պահանջելու: Մինչդեռ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով հստակ սահմանում է, որ սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ցանկանում ենք փաստել, որ այս պարագայում առկա է «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտում, քանզի նշված ենթակետի համաձայն՝ գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջված փաստաթղթերը:»:

Ելնելով վերոնշված փաստերից և փաստական հանգամանքներից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/45 ծածկագրով բողոքը մերժել:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից 06.05.2019թ. յուղերի և հատուկ հեղուկների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով, որպես գնումների համակարգողի էլեկտրոնային փոստի հասցե նշվել է t.abrahamyan@mil.am:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ կազմակերպությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ն:

«Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով, թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում որպես

ընկերության էլեկտրոնային փոստի հասցե նշել է bitxim.g@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 16.05.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնել ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 03.06.2019թ.-ին armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Մասնակցին ուղարկվել է ծանուցում հետևյալ բովանդակությամբ. *««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման արդյունքում 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով հանձնաժողովի կողմից 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ն: Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է սույն ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:»:*

«Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ի bitxim.g@gmail.com էլեկտրոնային փոստի արտատպման համաձայն՝ Մասնակիցը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին՝ t.abrahamyan@mil.am, 04.06.2019թ.-ին ժամը 15:43-ին ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ հավելված 6-ը և 6.1-ը:

Հանձնաժողովի 13.06.2019թ.-ին թիվ 4 արձանագրության համաձայն՝ *««Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ կողմից վերոնշյալ փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում չեն ներկայացվել, սակայն ընկերության կողմից գրավոր վիճարկվել է այդ փաստը /ընկերությունը պնդում էր որ պահանջվող փաստաթղթերը ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկել է սահմանված ժամկետում՝ 04.06.2019թ/: Հաշվի առնելով մասնակցի գրությունը և ներկայացրած արտատպված /print screen/ փաստաթուղթը, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և դիմել ՀՀ ՀՈՒ կապի վարչություն՝ տրամադրել տեղեկատվություն, արդյոք 2019 թվականի հունիսի 4-*

ից հունիսի 6-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ mail.mil.am սերվերում bitxim.g@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղղված նամակ գրանցվել է, թե՝ ոչ: ՀՀ ԶՈՒ կապի վարչության 14.06.2019թ Է/փ ելք 1242/ԿՎ գրության համաձայն 2019 թվականի հունիսի 4-ից հունիսի 6-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ mail.mil.am սերվերում bitxim.g@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղղված նամակ չի ուղարկվել, այլ ուղարկվել է 07.06.2019թ: Հիմք ընդունելով ՀՀ ԶՈՒ կապի վարչության գրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինս որակավորման փաստաթղթերը ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել:»:

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Փորձագիտական կենտրոն) կողմից «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ին 12.07.2019թ. տրված փորձագետի թիվ 20521906 եզրակացության համաձայն՝ «Gmail» էլեկտրոնային նամակագրական ծառայության կայքում «bitxim.g@gmail.com» էլեկտրոնային հասցեի՝ «Garik Mkrtchyan» օգտատիրոջ էլեկտրոնային նամակագրության տիրույթի «Sent» անվանումով պանակում առկա է «kencax qimia gorcara 2 puli pastatxter» անվանումով նամակ: Համաձայն նամակի կարգաբերումների, այն օգտատիրոջ կողմից ուղարկվել է 2019 թվականի հունիսի 4-ին ժամը 15:43-ին և նույն պահին նամակը հասել է «Gmail» կայքին:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից 25.06.2019թ. ներկայացված բողոքը հիմնավոր է, ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի

պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով ընթացակարգ հրավերով, որպես գնումների համակարգողի էլեկտրոնային փոստի հասցե նշվել է t.abrahamyan@mil.am:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ն որպես ընկերության էլեկտրոնային փոստի հասցե նշել է bitxim.g@gmail.com:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.05.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ն ճանաչել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 03.06.2019թ.-ին armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Մասնակցին ուղարկվել է ծանուցում հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու պահանջով:

Հանձնաժողովի 13.06.2019թ.-ին թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում չեն ներկայացվել:

ՀՀ ԶՈՒ կապի վարչության 14.06.2019թ Է/փ ելք 1242/ԿՎ գրության համաձայն՝ 2019 թվականի հունիսի 4-ից հունիսի 6-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ mail.mil.am սերվերում bitxim.g@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղղված նամակ չի ուղարկվել, այլ ուղարկվել է 07.06.2019թ:

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ին 12.07.2019թ. տրված թիվ 20521906 փորձագետի եզրակացության համաձայն՝ «Gmail» էլեկտրոնային նամակագրական ծառայության կայքում «bitxim.g@gmail.com» էլեկտրոնային հասցեի՝ «Garik Mkrtchyan» օգտատիրոջ էլեկտրոնային նամակագրության տիրույթի «Sent» անվանումով պանակում առկա է «kencax qimia gorcara 2 puli pastatxter» անվանումով նամակ: Համաձայն նամակի կարգաբերումների, այն օգտատիրոջ կողմից ուղարկվել է 2019 թվականի հունիսի 4-ին ժամը 15:43-ին և նույն պահին նամակը հասել է «Gmail» կայքին:

Անդրադառնալով Պատվիրատուի ՀՀ ԶՈՒ կապի վարչության 14.06.2019թ Է/փ ելք 1242/ԿՎ գրությանը, համաձայն որի՝ 2019 թվականի հունիսի 4-ից հունիսի 6-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ mail.mil.am սերվերում bitxim.g@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղղված նամակ չի ուղարկվել, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բողոքի շրջանակներում քննության առարկան է հանդիսանում Բողոքաբերի կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում պահանջված փաստաթղթերի չուղարկելու, այլ ոչ թե դրանք Պատվիրատուի կողմից չստանալու հիմքերը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացվել է Պատվիրատուի կողմից ծանուցմամբ պահանջված՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման փաստաթղթերը, հիմք ընդունելով գործում առկա ապացույցները և «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 12.07.2019թ. թիվ 20521906 փորձագետի եզրակացությունը:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի կողմից բողոքով ներկայացված մնացած պահանջներին, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից սույն բողոքով ներկայացված գնահատող հանձնաժողովի 13.06.2019թ. թիվ 4 արձանագրությամբ թիվ 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով կայացված որոշումը դադարեցվելու պարագայում, բողոքի մյուս պահանջները դառնում են առարկայազուրկ, քանի որ Օրենքի 51-րդ հոդվածի հիմքով, բողոքի քննությունը ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը, իսկ պայմանագիր կնքելու մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ է որպեսզի ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ուսումնասիրվեն և համապատասխանեն Հրավերով նախատեսված պայմաններին և գնահատվեն բավարար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից 25.06.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 13.06.2019թ. թիվ 4 արձանագրությամբ թիվ 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով կայացված «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**